

ՄԵԼԳՈՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՅՐԻՒ ՍԱՆԵՐԸ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ՄԵՋԱՄՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ն.Ա.Տ. Մեսրոպ Ա. Պատրիարք Յայրը 24 Յունուարի 2005ին, ժամը 18.00-ին, Պատրիարքարանի մէջ ընդունեց Մելգոնեան Կտակի Յետապնդման Յանձնախումբի անդամները:

Յանձնախումբի անդամները, Արտաշէս Չավուշեանի ատենապետութեամբ, շնորհակալութեամբ գնահատեցին Պատրիարք Հօր պատրաստականութիւնը զբաղելու Մելգոնեան Կտակի վերաբերող հարցերուն հետ եւ ապահովելու, որ Մելգոնեան վաստակաւոր Կրթական Հաստատութիւնը շարունակէ իր պատմական գործունէութիւնը:

28 Դեկտեմբերի 2004ին, Ամեն. Ս. Պատրիարք Յայրը իր պաշտօնարանին մէջ ընդունեց Տեարք՝ Րաֆֆի Յնձալեանը (Լոս Անճելըսի Մելգոնեան Սանուց Միութեան ատենապետ), Սկրտիչ Կոճամանեանը (նոյն միութեան փոխատենապետ) եւ Մարք Մաքթարլին (իրաւաբան), որոնք Պատրիարք Հօր տրամադրեցին Մելգոնեան Կտակի հիմնադրութեան փաստաթուղթի օրինակը (15 Դեկտեմբեր 1926ի փոփոխութիւններով հանդերձ):

1921ին, բնիկ կեսարացի հայազգի մեծահարուստ գործարար Կարապետ Մելքոնեանը, Պոլսոյ Յայոց Երանաշնորհ Զաւէն Պատրիարքին նուիրաբերած է անշարժ գոյք եւ այլ միջոցներ, որով Երանաշնորհ Հոգեւոր Պետը 1924ին հիմնած է որբանոց եւ դպրոց Կիպրոսի Նիկոսիա քաղաքը՝ անուանելով զայն Մելգոնեան Կրթական Հաստատութիւն (ՄԿՀ):

25 Դեկտեմբեր 1925ին Զաւէն Պատրիարք՝ Մելգոնեանի ամբողջ նուիրաբերութիւնը եւ ատկէ գոյացած միջոցները, ներառեալ Նիկոսիա ստեղծուած ՄԿՀ-ը փոխանցած է Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՅԲԸՄ), այն համոզմամբ, որ ՅԲԸՄ-ը կը կարողանար աւելի արդիւնաւետ իրականացնել նուիրաբերութեան նպատակները եւ կառավարել ձեռնարկը: 15 Դեկտեմբերի 1926ին ՅԲԸՄ-ի, Զաւէն Պատրիարքի եւ Կարապետ Մելգոնեանի միջեւ կնքուեցան Մելգոնեան Կտակի հիմնադրութեան փաստաթուղթի համապատասխան փոփոխութիւնները:

Համաձայն 15 Դեկտեմբերի 1926ի փոփոխութեան, ՅԲԸՄ-ը պարտաւոր է պահպանել ՄԿՀ-ն Նիկոսիա քաղաքին մէջ (Կիպրոս), Երուսաղէմի Յայոց Պատրիարքութեան վճարել տարեկան հազար եգիպտական փաունտ նպաստ, Պոլսոյ Յայոց Պատրիարքութեան վճարել տարեկան հազար եգիպտական փաունտ նպաստ, կառուցել մանկապարտէզ Աղէքսանդրիոյ Հայ Առաքելական Եկեղեցւոյ թաղամասին մէջ, ինչպէս նաեւ Պոլսոյ Յայոց Պատրիարքութեան վճարել տարեկան եւս հինգ հարիւր եգիպտական փաունտ օժանդակութիւն:

Աւելի քան 75 տարի, քանի դեռ ՅԲԸՄ-ը կը կատարէր ՄԿՀ-ը պահպանելու իր պարտականութիւնը, Պոլսոյ Յայոց Պատրիարքութեան եւ ՅԲԸՄ-ի յարաբերութիւնները եղած են բարեկամական: Այնուհանդերձ, 2004-ի Մարտին, խախտելով Մելգոնեան Կտակի հիմնադրութեան փաստաթուղթը, ՅԲԸՄ-ը պաշտօնապէս յայտարարեց, որ վերջնականապէս որոշած է փակել Կիպրոսի ՄԿՀ-ը եւ մինչեւ 2005 ուսումնական տարւոյ վերջը (Յունիս) տեղափոխել ուսանողները այլ հաստատութիւններ: ՅԲԸՄ-ն այս որոշումը ընդունած է առանց խորհրդակցելու Ն.Ա.Տ. Մեսրոպ Պատրիարքի հետ, որ կը հանդիսանայ Մելգոնեան Կտակի հիմնադիրներէն Երանաշնորհ Զաւէն Պատրիարքի իրաւայաջորդը:

Պատրիարք Յայրը յայտնեց Մելգոնեան Կտակի Յետապնդման Յանձնախումբի անդամներուն, որ Մելգոնեան Կտակի հիմնադրութեան փաստաթուղթի 1926ի փոփոխութեան մասին տեղեկացած է միայն 28 Դեկտեմբերի 2004ին, Լոս Անճելըսի Մելգոնեան սաներու միջոցով: Պատրիարք Յայրը շեշտեց, որ այժմ տեղեկ է ՅԲԸՄ-ի շարք մը պարտաւորութիւններուն մասին, զորս վերջինս ստանձնած է 1926ին Երանաշնորհ Զաւէն Պատրիարքէն:

Պատրիարք Յայրը տեղեկացուց Մելգոնեան Կտակի Յետապնդման Յանձնախումբի անդամներուն, որ որպէս Պոլսոյ Պատրիարք, Կտակի հիմնադրութեան փաստաթուղթերու

համաձայն, ի պաշտօնէ շահագրգիռ եւ պատասխանատու է Մելգոնեան Կտակի նպատակներուն լիարժէք իրականացման համար, ուստի եւ հայց յարուցած Լոս Անճըլըսի առաջին ատեանի նահանգային դատարանին մօտ, Լոս Անճըլըսի փաստաբան Մարկ ՄաքՔարլիի միջոցով:

Պատրիարք Յայրը բացատրեց նաեւ, որ պահանջած է դատարանէն 1) տալ պարզաբանում ՅԲԸՄ-ի պարտաւորութիւններուն վերաբերեալ, 2) պարտաւորեցնել ՅԲԸՄ-ը կատարել հաւատարմային կառավարիչի իր պարտականութիւնները, 3) պահանջել Մելգոնեան Կտակի հաշուետուութիւն 1926թ-էն ցայսօր ստացած նուիրաբերութիւններու օգտագործման վերաբերեալ եւ 4) ՅԲԸՄ-էն պահանջել ուղղել հաւատարմագրային կառավարման պայմաններու խախտումները եւ փոխհատուցանել ատոնց պատճառով յառաջացած վնասները:

Մելգոնեան Կտակի Յետապնդման Յանձնախումբի անդամներն իրենց աջակցութիւնը յայտնեցին Պատրիարք Յօր դատարանի միջոցով ՅԲԸՄ-ի պարտաւորութիւններու կատարման հասնելու գործին համար՝ շնորհակալութիւն յայտնելով Նորին Ամենապատուութեան Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակումը կանխելու իր ջանքերուն համար:

Մելգոնեան Կտակի Յետապնդման Յանձնախումբը կազմուեցաւ 2005-ի Սուրբ Ծննդեան տօնէն յետոյ, Մելգոնեան Կրթական Հաստատութեան նկատմամբ ՅԲԸՄ-ի կողմէ ձեռնարկուող քայլերուն եւ մամուլի մէջ ՄԿՀ-ին վերաբերող հարցերու լուսաբանման հետեւելու նպատակով:

Մելգոնեան Կտակի Յետապնդման Յանձնախումբի անդամներն են Տիար Արտաշէս Չավուշեան (ատենապետ), Տիար Յակոբ Մամիկոնեան (փոխատենապետ), Տիկին Սիլվա Գույունճեան (ատենադպիր), Տիար Երուանդ Ասա, Տիար Արթին Քիլերճի, Տիար Տորք Միրիջանեան եւ Տիար Արամ Էօզհալլաճեան՝ բոլորն ալ Պոլիս բնակող Մելգոնեան սաներ:

ԴԻԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
26 Յունուար 2005